## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ

---

<u>ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5</u>
26 ՀՈՒՆԻՍԻ 2024 թվական
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 (ինը)

անդամներ:

Բացակա էին՝ Ք. Միքայելյան, Ա. Աբրահամյան, Կ. Հարությունյան, Ա. Աղեքսանդրյան, Գ. Բաղդասարյան, Գ. Պետրոսյան

<u>Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝</u> Մ. Օհանյան, Հ. Խաչատրյան

<u>Նիստը վարում էր համայնքի ղեկավար Ար. Աղեքսանդրյանը</u>

<u>Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Դանիելյանը</u>

Լսեցին
*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. <u>ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ</u>/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

*Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է*

1.Հաստատել Եղեգիս համայնքի ավագանու 26-ը հունիսի 2024թ. չորրորդ նստաշրջանի հերթական հինգերորդ նիստի օրակարգը հետևյալ հարցերով՝

2.Քաղաքացի Արայիկ Գագիկի Աբրահամյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

3.Եղեգիս համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին,

4.Դրամական օգնություն ցուցաբերելու մասին,

5.Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահամաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,19263հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին,

6.Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 3,73265հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

7.Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1,80067հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին,

8.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին,

9.Ավագանու 02/02/2024թ. «2024 թվականի համար Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 04Ա որոշման հավելվածը նոր խմբագրությամբ հաստատելու մասին,

10.Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

11.Ավագանու 05/06/2024 թվականի թիվ 66Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,

12.Համայնքային նշանակության փողոցի անվանակոչման մասին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67Ա/

Լսեցին

*ՔԱՂԱՔԱՅԻ ԱՐԱՅԻԿ ԳԱԳԻԿԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման նփոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ

1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի 31/05/2024թ. N2/փ-233 դրական եզրակացությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արայիկ Գագիկի Աբրահամյանի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Արայիկ Գագիկի Աբրահամյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքից (0,6638հա մակերեսով, 10-029-0116-0033 կադաստրային ծածկագրով) առանձնացված 0,2655հա հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման (հյուրատուն կառուցելու համար):

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68Ա/

Լսեցին

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 2024 թվականի սեպտեմբերի 27 -ին, ժամը 15:00-ին:

Կողմ- 9 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69Ա/

Լսեցին

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՅԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Գ. Մարգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ավագանու 02/02/2024թ. թվականի թիվ 10Լ որոշումը, Եղեգիս համայնքի ղեկավարի 19/02/2024թ. թիվ 43Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է

Տալ համաձայնություն սույն որոշման կից հավելվածով ներկայացված Եղեգիս համայնքի բնակիչներին տրամադրելու դրամական օգնություն:

Կողմ-8   Դեմ-0   Ձեռնպահ-1

Ա. Աբրահամյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0,19263ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն   Ո Ր Ո Շ Ո Ւ Մ   Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող

գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը 25(քսանհինգ) տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին՝

1)կադաստրային ծածկագիր 10-021-0114- , մակերեսը 0,19263հա,

2.Մեկնարկային գին սահմանել երեսուն հազար(30 000 33 դրամ)
չափով:

3.Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 7 Դեմ- 1 Ձեռնպահ- 1
Ա. Ամբարցյան Ա. Ղազարյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71Ա/

Լսեցին

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ , ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3,73265 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*(Զեկ. ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

1)կադաստրային ծածկագիր՝ 10-007-0102-, մակերեսը՝ 3,73265հա, 1 լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 ( մեկ հարյուր )
տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 1 Ա. Ամբարցյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72Ա/

Լսեցին

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 1,80067 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

1)կադաստրային ծածկագիր՝ 10-007-0102- , մակերեսը՝ 1,80067 հա, 1 լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 100 ( [illegible] ) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 1. [illegible]

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73Ա/

Լսեցին

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

/Զեկ. Ս. ՕՀԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածների:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 1 Հր. Աբրահամյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74Ա/

Լսեցին

*ԱՎԱԳԱՆՈՒ 02/02/2024Թ. «2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 04Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

*\/Զեկ. ԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ/*

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Եղեգիս համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 2-ի «2024 թվականի համար Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, կառուցվածքը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 04Ա որոշման կից հավելվածը շարադրել նոր բովանդակությամբ՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 1 Հր. Աբրահամյան

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75Ա/

Հր. Աբրահամյանը լքեց նիստը ժամը 16⁰⁰:

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Եղեգիս գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության 0,0136 հա մակերեսով, 10-021-0006-0004 կադաստրային ծածկագրով այլ հողատեսքը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների (ինքնակամ կառուցված 211.69ք/մ մակերեսով շինության՝ անասնաշենքի օրինականացման նպատակով)։

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը։

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76Ա/

Լսեցին

ԱՎԱԳԱՆՈՒ 05/06/2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 66Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 3-րդ մասով

ԱՎԱԳԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու 05-ը հունիսի 2024 թվականի «Եղեգիս համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերը երեք տարի ժամկետով վարձակալության տրամադրելու մասին» թիվ 66Ա որոշման՝

1)Վերնագրում «համայնքային» բառից հետո կատարել լրացում «և պետական» բառերով,

2)1)-ին, 2)-րդ և 4)-րդ կետերում «համայնքային» բառը փոխարինել «պետական» բառով:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77Ա/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման 3-րդ գլխի դրույթները, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 019WKMTMB ծածկագիրը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի «Վերևի թաղամաս» տանող փողոցը անվանակոչել՝ «Եղեգիս համայնք, Եղեգիս գյուղ, 1-ին փողոց, 5-րդ նրբանցք» անվամբ:

Կողմ- 8 Դեմ- 0 Ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78Ա/

Ավագանու անդամներ՝

Ստեփանյան Արթուր

Մարտիրոսյան Նարեկ

Մարտիրոսյան Զոյա

Հակոբյան Արտուշ

Պողոսյան Հրաչյա

Մանուկյան Սաթինե

Նազարյան Արգիշտի

Ղահրամանյան Վարդան

Գաբրիելյան Ահարոն

Սմբատյան Մամիկոն

Հարությունյան Կարեն

Սմբատյան Արսեն

Ստեփանյան Սաշա

Միքայելյան Քրիստինա

Բաբայան Վահե

*Նիստն արձանագրեց՝* Աննա Ղանիեյանը